FO.1941.1.06 Ուժի մեջ է՝ 30.06.2023թ
«Հրապարակային»
«Արդշինբանկ»ՓԲԸ
Հաստատված է առաջին անգամ
Վարչության 2024թ.նոյեմբերի 21-ի թիվ 01/086 - 523 Լ որոշմամբ
Ուժի մեջ է մտնում՝ 03.12.2024թ.
Վարչության նախագահ՝ Ա.Անանյան

RU-1510.0.01
Արժեթղթերի ռեեստրի վարման միջնորդավորման կանոններ

1.Նպատակ
Սույն կանոնները կանոնակարգում են «Արդշինբանկ» ՓԲԸ-ում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հետ կնքված պայմանագրերին համապատասխան Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից մատուցվող Ռեեստրի վարման ծառայությունների միջնորդավորումը:

2. Կիրառման ոլորտ և Պատասխանատվություն
2.1 Սույն Կանոնների տիրապետողն է Ներդրումային բիզնեսի զարգացման վարչությունը (**151**):
2.2 Սույն Կանոնները տարածվում են Ռեեստրի վարման ծառայության մասնակիցների վրա:

3. Սահմանումներ և Հապավումներ
«Բանկ»՝«Արդշինբանկ» ՓԲԸ,
«Օրենք»՝«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք,
«ՀՀ ԿԲ»՝Հայաստանի հանրապետության կենտրոնական բանկ,
«ՀԿԴ»՝Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ,
«ԱՄՏԾ»՝Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիր,
«ԱՆԾ»՝Արժեթղթերի նույնականացնող ծածկագիր,
«Թողարկող»՝ այն անձը, որն արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում,
«Արժեթղթերի սեփականատերերի ռեեստր կամ Ռեեստր»՝ Թողարկողի, դրա կողմից թողարկված անվանական արժեթղթերի և այդ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ տվյալների համակարգ,
«Հաշվի Օպերատոր»՝Համակարգի Անդամ հանդիսացող անձ, որը ՀԿԴ-ի հետ կնքած պայմանագրով և Կանոններով սահմանված իրավասությունների շրջանակում, Թողարկողից, Հաշվետիրոջից կամ իրավասու այլ անձանցից ստացված հանձնարարականները և այլ տեղեկությունները (փաստաթղթերը) փոխանցում է ՀԿԴ-ին Համակարգում այն գործառնությունների կատարման համար, ինչպես նաև միջնորդավորում է ՀԿԴ-ի կողմից մատուցվող այն ծառայությունները, որոնք անմիջականորեն չեն հանգեցնում Կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների կնքմանը,
«Համակարգ»՝ արժեթղթերի հաշվառումն ապահովող և արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում փոխադարձ պարտավորությունների կատարման և այդ պարտավորությունների կատարումը երաշխավորող տեխնիկական և իրավական միջոցների ամբողջություն,
«Ծրագրային համակարգ»՝ ՀԿԴ-ի գործառույթների իրականացումն ապահովող համակարգչային ծրագրերի ամբողջություն (DEPEND),
«Հաշվետեր կամ Հաճախորդ»՝ անձ, որն ունի (որի անունով առկա է) Համակարգում բացված արժեթղթերի հաշիվ,

«Գործառնություն»՝ Համակարգում արժեթղթի Հաշվետիրոջ, Թողարկողի, վերջիններիս լիազորված ներկայացուցիչների կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց հանձնարարականի հիման վրա իրականացվող գործողություն, որի արդյունքում տեղի է ունենում արժեթղթերի հաշվի բացում, արժեթղթերի հաշվում առկա տեղեկությունների փոփոխություն, արժեթղթերի հաշվի փակում, արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի մնացորդի փոփոխություն, թողարկողի արժեթղթերի ռեեստրում այլ գործողությունների գրանցում և/կամ Համակարգից տեղեկությունների տրամադրում,

«Կորպորատիվ գործողություն»՝ Թողարկողի որոշմամբ տվյալ թողարկողի որևէ դասի (տեսակի) արժեթղթերի անվանական արժեքի փոփոխություն, փոխարկում, բաժանում, համախմբում, հետգնում, ձեռքբերում, մարում, չեղյալ համարում կամ Թողարկողի վերակազմակերպում, արժեթղթերի հետ կապված եկամուտների վճարում,

«Արժեթղթերի բաժանում»՝ Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի փոխարկումը նույն դասի ավելի մեծ քանակի արժեթղթերի,

«Արժեթղթերի համախմբում»՝ Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի փոխարկումը նույն դասի ավելի փոքր քանակի արժեթղթերի,

«Արժեթղթերի ձեռքբերում»՝ Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի որոշ մասի՝ Թողարկողի կողմից գնման գործընթաց, որի իրականացման մասին որոշման ընդունումը Թողարկողի համար օրենքով սահմանված պարտավորություն չէ,

«Արժեթղթերի հետգնում»՝ Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի (բացառությամբ բաց ներդրումային ֆոնդերի արժեթղթերի) որոշ մասի՝ Թողարկողի կողմից գնման գործընթաց, որի իրականացումը տվյալ արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) որոշմամբ կամ օրենքով պարտադիր է,

«Արժեթղթերի փոխարկում»՝ Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի շրջանառությունից հանումը և չեղյալ համարումը (Համակարգից հեռացումը) նույն թողարկողի կամ այլ թողարկողի արժեթղթերով փոխանակելու միջոցով,

«Հանձնարարական»՝ Համակարգում գործառնություններ (բացառությամբ տեղեկությունների տրամադրման) կատարելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ,

«Հարցում»՝ Համակարգից տեղեկությունների տրամադրման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք չեն կարող որակվել որպես հանձնարարական,

«Անվանատեր»՝ անձ, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը,

«Ընկերությունների միաձուլում»՝ նոր ընկերության ստեղծում՝ նրան երկու կամ ավելի միաձուլվող ընկերությունների իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ և միաձուլվող ընկերությունների դադարմամբ,

«Ընկերության բաժանում»՝ Ընկերության դադարում՝ նրա բոլոր իրավունքների և պարտականությունների՝ նոր ստեղծվող ընկերություններին փոխանցմամբ,

«Ընկերության վերակազմակերպում»՝ կազմակերպության կազմակերպական-իրավական ձևի փոփոխություն,

«Պայմանագիր»՝ Ռեեստրի վարման պայմանագիր,

4. Հավելվածներ և Առնչվող Փաստաթղթեր

4.1 Հավելվածներ

Անվանում	Կոդ
Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ծառայությունների մատուցման համար ներկայացվող փաստաթղթերի և	LI-1510.0.01.01

տեղեկությունների ցանկ	

5. Նկարագրություն

5.1 Ընդհանուր դրույթներ

5.1.1 Բանկը հանդիսանում է Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ, ում ՀԿԴ-ի կողմից շնորհվել է Հաշվի Օպերատորի կարգավիճակ:

5.1.2 Բանկը Համակարգում իրականացնում է ՀԿԴ կողմից Թողարկողներին մատուցվող ծառայությունների միջնորդավորում՝ ՀԿԴ հետ կնքած պայմանագրով սահմանված իրավասությունների շրջանակում, որոնք չեն ներառում այն ծառայությունները, որոնք կապված են կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի հետ:

5.1.3 Ծրագրային համակարգում աշխատելու համար Բանկի աշխատակիցը կարող է օգտվել ՀԿԴ-ի կողմից մշակված համապատասխան «ուղեցույցերից», որոնք տեղադրված և թարմացվում են ՀԿԴ-ի պաշտոնական կայքէջում:

5.1.4 Բանկը պարտավոր է ստացված Հանձնարարականները մուտքագրել Ծրագրային համակարգ՝ ՀԿԴ կանոններով սահմանված ժամկետներում, եթե Հանձնարարականը տված անձն ավելի երկար ժամկետ չի սահմանել:

5.1.5 Բանկը, նախքան ստացված Հանձնարարականի հարցման մուտքագրումը Ծրագրային համակարգ, պարտավոր է ստուգել Հանձնարարականը ներկայացրած անձի իրավասությունները: Ընդ որում՝ Բանկը սույն Կանոններով սահմանված ծառայություններ մատուցելիս գործում է միայն Թողարկողի, Թողարկողի լիազորված ներկայացուցչի, Հաշվետիրոջ, Հաշվետիրոջ լիազորված ներկայացուցչի կողմից ներկայացված Հանձնարարականի կամ հարցման հիման վրա, եթե Օրենքով, ՀԿԴ կանոններով այլ բան սահմանված չէ:

5.1.6 Բանկը պարտավոր է ստուգել իր կողմից Ծրագրային համակարգում գործառնությունների իրականացման Հանձնարարականների ճշտությունը: Բանկը պատասխանատվություն է կրում սույն կետով սահմանված պահանջի խախտման համար:

5.1.7 Բանկը ստուգում է Թողարկողի կողմից Բանկ ներկայացված Հանձնարարականը (հարցումը) և այլ առնչվող փաստաթղթեր՝ անհրաժեշտության դեպքում գրավոր եզրակացություն տալով վիճելի դրույթների վերաբերյալ:

5.1.8 Բանկը պարտավոր է պահպանել Համակարգում գրառման իրականացման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, այդ թվում՝ Հանձնարարականները և հարցումները՝ ստանալուց առնվազն 10 (տասը) տարվա ընթացքում:

5.2 Հաճախորդին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրման կանոններ

5.2.1 Գովազդի, մարքեթինգային միջոցառումների, գովազդային բուկլետների, Բանկի ինտերնետային կայքի, Բանկի աշխատակիցների կողմից տրված տեղեկատվության միջոցով Թողարկողները ծանոթանում են Բանկի միջնորդությամբ Համակարգում Թողարկողների անվանական արժեթղթերի ռեեստրի վարման ծառայությունների բոլոր պայմաններին:

5.3 Պայմանագրի կնքման և վերակնքման կանոններ

5.3.1 Բանկի միջնորդությամբ ՀԿԴ-ին Հաճախորդի Ռեեստրի վարումը կարող է հանձնվել Պայմանագրի կնքմամբ, այն դեպքում, եթե Թողարկողն առաջին անգամ է իր Ռեեստրի վարումը հանձնում ՀԿԴ-ին կամ Պայմանագրի վերակնքմամբ, այն դեպքում, եթե արդեն իսկ Թողարկողի և ՀԿԴ-ի միջև առկա է այլ Հաշվի օպերատորի միջնորդությամբ կամ առանց դրա կնքված պայմանագիր:

5.3.2 Պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում է ՀԿԴ-ի կողմից:

5.3.3 Թողարկողը Բանկի միջնորդությամբ ռեեստրի վարմամբ պայմանավորված բոլոր ծառայություններից օգտվելու համար կնքում/վերակնքվում է Ռեեստրի վարման եռակողմ պայմանագիր: Պայմանագիրը կազմվում է 3 (երեք) օրինակից:

5.3.4 Բանկի միջնորդությամբ Պայմանագիրը կնքվում է, եթե Թողարկողի ռեեստրի վարում չի իրականացվում ՀԿԴ կողմից՝ Թողարկողը ՀԿԴ հետ չունի կնքված Պայմանագիր:

5.3.5 Բանկի միջնորդությամբ Պայմանագիրը վերակնքվում է, եթե Թողարկողի ռեեստրի վարումն իրականացվում է ՀԿԴ կողմից՝ Թողարկողն ունի ՀԿԴ հետ առանց Հաշվի Օպերատորի միջնորդության կամ որևէ այլ հաշվի օպերատորի (բացառությամբ Բանկի) միջնորդությամբ կնքված Պայմանագիր:

5.3.6 Պայմանագիրը կնքվում է Թողարկողի դիմումի հիման վրա:

5.3.7 Բանկի միջնորդությամբ Պայմանագրի վերակնքման դեպքում նախկինում կնքված Ռեեստրի վարման և, առկայության դեպքում՝ Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագրերը համարվում են լուծված Ռեեստրի վարման նոր պայմանագրի վերակնքման պահից:

5.3.8 Բանկի կողմից Պայմանագիրը կնքվում կամ վերակնքվում է, եթե վերջինս հավաստիանում է, որ Թողարկողի կողմից ներկայացված փաստաթղթերը լիարժեք են, կազմված և հաստատված են պատշաճ կերպով, ինչպես նաև դրանցում ներառված տեղեկություններում առկա չեն անհամապատասխանություններ ու թերություններ:

5.3.9 Ռեեստրավարման ծառայություններ մատուցելիս Թողարկողները պետք է ներակայացնեն սույն Կանոնների հավելվածով (**LI-1510.0.01.01**) սահմանված փաստաթղթերը և ՀԿԴ կողմից հաստատված այլ անհրաժեշտ փաստթղթերը, իսկ վերջիններիս կողմից թերի ներկայացման դեպքում Բանկն ընթացք չի տալիս համապատասխան գործառույթի կատարմանը:

5.4 Թողարկողի հետ թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագրի կնքման կանոններ

5.4.1 Պայմանագրի վերակնքման գործընթացի հետ միաժամանակ Բանկը Թողարկողի հետ կնքում է նաև Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագիր և Թողարկողի համար բացում Թողարկողի արժեթղթերի հաշիվ, եթե Թողարկողն ունի հետգնված (ձեռքբերված) և չմարված դասի արժեթղթեր՝ մասնավորապես, Ծրագրային համակարգում ունի ոչ զրոյական մնացորդով Թողարկողի արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև այն դեպքում, եթե Թողարկողը Բանկի հետ դեռ չի կնքել նման պայմանագիր: Եթե Թողարկողը սույն կետում սահմանված դեպքում հրաժարվում է Բանկի հետ կնքել Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագիր, ապա Բանկը մերժում է նաև Ռեեստրի վարման պայմանագրի կնքումը:

5.4.2 ՀԿԴ-ն Պայմանագրի կնքումից/վերակնքումից հետո համապատասխանաբար 3/1 (երեք/մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տվյալ Հաշվի օպերատորին տալիս է տվյալ Թողարկողին սպասարկելու հասանելիություն, եթե արդեն տրված չէ, իսկ Հաշվի օպերատորի փոխվելու դեպքում միաժամանակ արգելափակում է նախկին Հաշվի օպերատորի՝ Թողարկողին սպասարկելու հասանելիությունը և ծանուցում վերջինիս տվյալ Թողարկողի հետ Ռեեստրի վարման և Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագրերի լուծման վերաբերյալ: Եթե Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման ժամանակ Թողարկողի համար բացվել է Թողարկողի արժեթղթերի նոր հաշիվ, ապա ՀԿԴ-ն 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նախկին Հաշվի օպերատորին տեղեկացնում է նաև Թողարկողի նոր արժեթղթերի հաշվի համարի վերաբերյալ: Ծանուցումը ստանալու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում նախկին Հաշվի օպերատորը պարտավոր է տվյալ Թողարկողի արժեթղթերի հաշվում առկա հետգնված կամ ձեռք բերված արժեթղթերի պորտֆելը (առկայության դեպքում) փոխանցել ծանուցման մեջ նշված արժեթղթերի հաշվին՝ փակելով արժեթղթերի նախկին հաշիվը:

5.5 Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված գործառնությունների կանոններ

5.5.1 Արժեթղթերի տեղաբաշխման գործառնությունը Ծրագրային համակարգում գրանցվում է Արժեթղթերի առաջնային տեղաբաշխման կամ լրացուցիչ տեղաբաշխման գործառնությունների ձևով:

5.5.2 Արժեթղթերի տեղաբաշխման դեպքում Բանկը պարտավոր է Ռեեստր մուտքագրել և ճշտել ռեեստրում առկա՝ արժեթղթերի և դրանց թողարկողի մասին տեղեկությունները:

5.5.3 Թողարկողը արժեթղթերի առաջնային տեղաբաշխման գործառնությունը գրանցելու համար Բանկ պետք է ներկայացնի սույն Կանոնների հավելվածում (**LI-1510.0.01.01**) նշված փաստաթղթերի ցանկը:

5.5.4 Համաձայն ՀԿԴ կանոնների՝ Արժեթղթերի տեղաբաշխման գործառնության ավարտից հետո տեղաբաշխման համար նախատեսված արժեթղթերը ներառող հաշիվները զրոյացվում են:

5.6 Կորպորատիվ գործողությունների հետ կապված գործառնություններ

5.6.1 Արժեթղթերի անվանական արժեքի փոփոխմամբ, համախմբմամբ, բաժանմամբ, թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերի մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերով փոխարկմամբ, Արժեթղթերի տեղաբաշխմամբ (Կարգավորվող շուկայում և Կարգավորվող շուկայից դուրս), Թողարկողի վերակազմակերպմամբ, Արժեթղթերի ձեռքբերմամբ/հետգնմամբ, Արժեթղթերի մարմամբ կամ չեղյալացմամբ, Ռեեստրի վարման պայմանագրի լուծմամբ, Արժեթղթերի փոխանցմամբ, բաժնետոմսերի պարտադիր գնման/վաճառքի պահանջով պայմանավորված գործառնությունների գրանցման դեպքում Թողարկողը Բանկ է ներկայացնում համապատասխան դիմում և/կամ Կորպորատիվ գործողության Հանձնարարական, որում և որին կից պետք է ներկայացվեն տեղեկությունները և փաստաթղթերը՝ համաձայն սույն Կանոնների Հավելվածի (**LI-1510.0.01.01**) և ՀԿԴ կողմից հաստատված այլ անհրաժեշտ փաստթղթերի:

5.6.2 Կորպորատիվ գործողության իրականացման արդյունքում կոտորակային (ոչ ամբողջական) արժեթղթերի (այդ թվում բաժնետոմսերի) առաջացման դեպքում դրանք ենթակա են Թողարկողի կողմից հետգնման ՀՀ օրենսդրությամբ և/կամ նաև ՀԿԴ կանոններով սահմանված կարգով և ժամկետներում (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի):

5.6.3 Արժեթղթերի ձեռքբերմամբ և հետգնմամբ պայմանավորված կորպորատիվ գործողությունը գրանցելու համար Թողարկողը դիմում է ներկայացնում, որտեղ նշվում է Համակարգում այդպիսի գրառում կատարելու խնդրանքի մասին՝ ներկայացնելով բաժնետերերի ժողովի անցկացման համապատասխան որոշումը:

5.6.4 Բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը չեղյալ են համարվում (արժեթղթերի հաշվառման համակարգից հեռացվում են) միայն այդ բաժնետիրական ընկերության լուծարման, վերակազմակերպման արդյունքում, գործունեության դադարեցման կամ այդ բաժնետոմսերի ամբողջությամբ փոխարկման դեպքում:

5.6.5 Արժեթղթերի մարման դեպքում դրանք չեղյալ են համարվում մարումից հետո՝ դիմումի հիման վրա կամ մարման ժամկետի լրանալու հիմքով:

5.6.6 Յուրաքանչյուր կորպորատիվ գործողություն իրականացնելիս Հաճախորդի գործադիր մարմնի ղեկավարը կամ նրա լիազորված ներկայացուցիչը, բացի վերոնշյալ տեղեկություններից, Բանկ են ներկայացնում իրենց անձը հաստատող փաստաթուղթը:

5.7 Թողարկողի մասին ռեեստրում առկա տեղեկությունների փոփոխման կանոններ

5.7.1 Թողարկողի պահանջով Ծրագրային համակարգից Ցուցակի, տեղեկանքների և այլ տեղեկատվության տրամադրումը իրականացվում է համաձայն սակագների:

5.7.2 Թողարկողն իր վերաբերյալ Ռեեստրում առկա տեղեկությունների փոփոխության դեպքում, որոնք արժեթղթերի դասի փոփոխության չեն հանգեցնում, Բանկ է ներկայացնում դիմում և

փոփոխված տեղեկությունները, ինչպես նաև այդ փոփոխության պետական գրանցման փաստաթղթերի պատճենները, եթե տվյալ փոփոխությունը պետական գրանցման ենթակա է:

5.7.3 Թողարկողը պարտավոր է Թողարկողի լուծարման վերաբերյալ որոշման ընդունման կամ Թողարկողի նկատմամբ սնանկության գործընթաց սկսվելու կամ դադարելու, Թողարկողի անվանման, պետական գրանցման վավերապայմանների, հաշվառման հասցեի կամ գտնվելու վայրի, կոնտակտային տվյալների, Թողարկողի անունից Հանձնարարականներ կամ Հարցումներ ներկայացնելու լիազորություններ ունեցող անձի, Թողարկողի կողմից թողարկված (տեղաբաշխված) արժեթղթերի վերաբերյալ Համակարգում առկա տեղեկությունների փոփոխության, ինչպես նաև Ռեեստրի վարման շրջանակներում ՀԿԴ-ին ներկայացված տեղեկություններում անճշտությունների կամ թերությունների (բացթողումների) բացահայտման դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել Բանկին՝ ներկայացնելով փոփոխությունները հավաստող կամ անճշտությունները և թերություններն ուղղելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

5.8 Ծրագրային համակարգից տեղեկությունների տրամադրման և հրապարակման կանոններ

5.8.1 Ծրագրային համակարգից տեղեկություններ տրամադրվում են ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով և Ծառայությունների մատուցումը կարգավորող՝ ՀԿԴ այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերով, ծավալով և կարգով: Բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և ՀԿԴ կանոններով սահմանված դեպքերի, երրորդ անձանց հարցման հիման վրա կամ երրորդ անձանց վերաբերող տեղեկություններ Համակարգից չեն տրամադրվում:

5.8.2 Համակարգից տեղեկություններ ստանալու իրավունք ունեն՝

ա) Թողարկողը,

բ) Հաշվետերը և նրա լիազոր ներկայացուցիչը և Հաշվետիրոջ արտաքին աուդիտ իրականացնող ընկերությունը՝ հաշվետիրոջ գրավոր համաձայնությամբ,

գ) Նոտարները, մասնավորապես նոտարական հարցումների դեպքում Ծրագրային համակարգից տեղեկությունների ստացման նպատակով Բանկը պարտավոր է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում նշված հարցումը տրամադրել ՀԿԴ-ին,

դ) Օրենքով և ՀԿԴ կանոններով սահմանված այլ իրավասու անձինք:

5.8.3 Թողարկողն իրավունք ունի Ռեեստրից տեղեկություններ ստանալ իր իրավասության շրջանակներում տրված գրավոր (թղթային կամ էլեկտրոնային տարբերակով) դիմումի հիման վրա հաշվի առնելով ՀԿԴ կանոններով սահմանված սահմանափակումները:

5.8.4 Բանկը Թողարկողի գրավոր դիմումի հիման վրա Թողարկողին է տրամադրում Արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը (այսուհետ՝ Ցուցակ)՝ հարցման մեջ նշված ժամանակահատվածի համար, որը չի գերազանցում ՀԿԴ հետ ռեեստրի վարման պայմանագրային հարաբերությունների ժամանակահատվածը, կամ որը չի գերազանցում և ներառում է գործառնության առարկա հանդիսացած արժեթղթերի վերաբերյալ Ծրագրային համակարգում տեղեկությունների առկայության ժամանակահատվածը:

5.8.5 Թողարկողի պահանջով Բանկը պարտավոր է Թողարկողին տրամադրել Արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) Ցուցակում ներառված անվանատիրոջ հաշվին հաշվառված արժեթղթերի սեփականատերերի ցանկը, որը Բանկը ստանում է ՀԿԴ-ից:

5.8.6 Բանկը մերժում է Թողարկողի հարցմամբ պահանջվող տեղեկությունների տրամադրումը, եթե Թողարկողի հարցումը չի համապատասխանում ՀԿԴ կանոններով սահմանված պահանջներին կամ Թողարկողը հրաժարվում է վճարել տեղեկությունների տրամադրման համար Բանկի սակագներով սահմանված վճարը:

5.8.7 Բանկը պարտավոր է իր Թողարկողներին տեղեկացնել նրանց Հանձնարարականների կատարման ընթացքի մասին՝ ըստ Թողարկողի պահանջի:

5.9 Ռեեստրի վարման պայմանագրի լուծման կանոններ

5.9.1 Պայմանագիրը կարող է լուծվել, եթե տեղի է ունեցել Թողարկողի վերակազմակերպում (բաժնետիրական ընկերությունից սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ տեսակի ընկերության/ընկերակցության, կոոպերատիվի և այլն) կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում:Պայմանագրի լուծման արդյունքում Հաճախորդի և ՀԿԴ-ի միջև Բանկի միջնորդությամբ ստորագրվում է Պայմանագրի լուծման վերաբերյալ համաձայնագիր:

5.9.3 Այլ հաշվի օպերատորի հետ «Ռեեստրի վարման պայմանագիր» վերակնքելու դեպքում Թողարկողը Բանկին վճարում է Բանկի նկատմամբ չմարած պարտավորությունները (դրանց առկայության դեպքում): ՀԿԴ-ն 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում արգելափակում է Բանկի Թողարկողի սպասարկման հասանելիությունը:

5.9.4 Բանկը ՀԿԴ կողմից ծանուցվում է տվյալ Թողարկողի հետ Պայմանագրի լուծման վերաբերյալ, որի մեջ նշվում է նաև Թողարկողի նոր բացված արժեթղթերի հաշվի համարը:

5.9.5 Ծանուցումը ստանալու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը տվյալ Թողարկողի արժեթղթերի հաշվում առկա հետգնված կամ ձեռք բերված արժեթղթերի պորտֆելը (առկայության դեպքում) փոխանցում է ծանուցման մեջ նշված արժեթղթերի հաշվին՝ փակելով արժեթղթերի նախկին հաշիվը:

5.10 ՀԿԴ կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունների միջնորդավորման կանոններ

5.10.1 ՀԿԴ կողմից Թողարկողներին մատուցվող լրացուցիչ ծառայությունների միջնորդավորումն իրականացվում է՝ համաձայն ՀԿԴ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված կարգով և Լրացուցիչ ծառայությունների մատուցման պայմանագրի:

5.10.2 Լրացուցիչ ծառայությունների գծով վճարը սահմանվում է Բանկի կողմից իրականացվող գործառնությունների համար սահմանված սակագներով:

5.11 Եզրափակիչ դրույթներ

5.11.1 Բանկը կասեցնում է իր միջնորդությամբ ռեեստրի վարման պայմանագիր կնքած Թողարկողներին ծառայությունների մատուցումը, եթե վերջիններս Բանկի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման 3 (երեք) ամիս և ավելի ժամկետանց պարտավորություն, և/կամ, դատարանի ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ համաձայն Ծրագրային համակարգում ՀԿԴ կողմից կատարված գրառման: Ծառայությունների կասեցման դեպքում կասեցման պահից դադարեցվում է նաև ծառայությունների դիմաց գանձվող վճարների հաշվարկը:

5.11.2 Ռեեստրավարման ծառայություններ մատուցելիս Թողարկողի կողմից ըստ գործառնության տեսակի, Բանկ է ներկայացվում փաստաթղթերի փաթեթը՝ համաձայն սույն Կանոնների հավելվածի (**LI-1510.0.01.01**) և ՀԿԴ կողմից հաստատված այլ անհրաժեշտ փաստթղթերի: